

## **ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ**



### **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Սիրելի՛ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:

**Դատարան** դիմելու դեպքում Ձեր և «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

**Ֆինանսական համակարգի հաշտարարին** դիմելու դեպքում Ձեր և «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «**Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին**» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն **ԱՆՎՃԱՐ** են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ: «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ պատասխանը ստանալուց հետո Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը **չի կարող քննել** Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոք ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ պատասխանը
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, կամ Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը)
3. «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի 2-ը:

Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

### **Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ**

Հաշտարար՝	Փիրուզ Սարգսյան
Գտնվելու վայրը՝	0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոն 4-րդ հարկ, 411 սենյակ
Հեռ.՝	(010) 58 23 21, 58 23 22
Էլ. հասցե՝	<a href="mailto:info@fsm.am">info@fsm.am</a>
Ֆաքս՝	(010) 58 24 21
կայք՝	<a href="http://www.fsm.am">www.fsm.am</a>

Միքելի՝ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Անիվ» ՈՒՎԿ ՍՊ ընկերությունը հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:  
Դա նշանակում է, որ «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ դեմ կայացված որոշումները:

**Դուք** կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ միջև վեճերը, սակայն կարող է «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ խախտել է օրենքի պահանջները:

### ՀՀ Կենտրոնական բանկ

Հասցե՝ 0010, ք.Երևան, Վազգեն Սարգսյան 6  
Հեռ.՝ (010) 592-697  
Էլ. հասցե՝ [chairman@cba.am](mailto:chairman@cba.am)  
Ֆաքս՝ (010) 565-496  
Կայք՝ [www.cba.am](http://www.cba.am)

Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ միջև կնքվել է **արբիտրաժային համաձայնություն**, դա նշանակում է, որ «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք գրկվում եք «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: